

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

Երեկոյեան ժամը 6:00ին Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ ճան Կոկեան Սրահին մէջ տեղի ունեցաւ ընկերային ժամը, իսկ ժամը 7:00ին պաշտօնական ճաշկերոյթը՝ Նախագահութեամբ Առաջնորդ Սրբապան Հօր: Հոգեւորականներ, Պարգամաւորներ, Տիկնանց Միութեան Պարգամաւորուհիներ եւ Ծուխի հաւատացեալներ սիրոյ ջերմ մթնոլորտի մէջ վայելեցին ընթրիքը:

Այս առթիւ տպուած էր յատուկ գրքոյկ մը, որուն սկիզբը Սրբապան Հայրը գրած էր հետեւեալ պարգամը:

ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ
ԵՒ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

*«Ուր որ երկու կամ երեք հոգի
հաւաքուած ըլլան իմ անունովս՝
ես այնտեղ եմ, անոնց մէջ»
(Մատթէոս 18:20):*

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն մեր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները կը յղենք Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քահանայ Խաչատուրեանին, Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան, Ժողովի պատրաստութեան յանձնախումբին, յարակից կապակերպութիւններուն եւ համայն հաւատացեալներուն:

Փառք կու տանք Ամենակալին Աստուծոյ, որ Արեւմտեան Թեմը օժտած է նուիրեալ եւ հաւատացեալ հայորդիներով, որոնք իրենց Ծխական եկեղեցւոյ մէջ Հոգեւոր Հովիւի կողքին օգտակար ծառայութիւն կը մատուցանեն՝ ծառայելով Աստուծոյ եւ մեր սիրեցեալ Հայ Ժողովուրդին:

Հոգեւոր Հովիւներ, Ծխական Խորհուրդներու Արեւնապետներ, Պարգամաւորներ իրենց ծառայութիւնները կը մատուցանեն նաեւ Թեմական մակարդակով, երբ կը հաւաքուին մասնակցելու Արեւմտեան Թեմի 82րդ Թեմական Պարգամաւորական Ժողովին՝ խորհրդակցելու Թեմիս առաւել պայծառութեան եւ հպօրացման համար: Մեր Տէրը կ'ըսէ. *«Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս՝ ես այնտեղ եմ, անոնց մէջ»:*

Աստուծոյ օգնութեամբ, բոլորս համագործակցութեամբ եւ ծրագրուած աշխատանքով, մեր հոգեւոր առաքելութիւնը քաջաբար պիտի շարունակենք եւ հոգեւոր սնունդ պիտի մատակարարենք մեր հաւատացեալներուն եւ յարկապէս երիտասարդ սերունդին: Վստահ ենք, Տէր Արշակի գլխաւորութեամբ, Ժողովի պատրաստութեան յանձնախումբը սքանչելի աշխատանք պիտի տանի Ժողովի օրերուն գոհ ձգելու բոլոր պարգամաւորները, որպէսզի ուրախ տրամադրութեամբ եւ հանգիստ մտքով լծուին Ժողովի օրակարգի գործադրութեան:

Կ'աղօթենք Աստուծոյ, որ օրհնէ ձեզ բոլորդ եւ Թեմական Պարգամաւորները, որոնք իրենց թանկագին ժամանակն ու Աստուածատուր կարողութիւնները կը տրամադրեն Թեմիս առաւել բարգաւաճման եւ պայծառութեան համար: *«Հսկեցէք, հաստատուին մնացէք հաւատարմի մէջ, քաջ եղէք, պօրացէք: Ձեր ամէն ինչը սիրով թող ըլլայ»* (Ա. Կորնթ. 16:13-14):

Իրենց սրտի խօսքը գրած էին Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար ԺոպէՖ Կանիմեան, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան եւ Պարգամաւորական Ժողովի Հիւրընկալ Յանձնախումբի Արեւնապետ՝ Տիկին Լիլի Պալեան:

Օրուան Հանդիսավարն էր Տիար Ռապրթ Պարսամ, որ բացման խօսքը կատարեց եւ ողջունեց բոլորին ներկայութիւնը եւ իր ուրախութիւնը յայտնեց Պարգամաւորական Ժողովի ընթացքին Սրբապան Հօր շնորհուած եօթնամեայ պաշտօնավարութեան շրջանը: Նոյնպէս ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հիւրընկալ Յանձնախումբի Արեւնապետ՝ Տիկին Լիլի Պալեան:

Իսկ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Բրշ. Տոքթ. Սարգիս Տէր Մետրոպեան ոգեւորիչ խօսքով կենաց առաջարկեց Առաջնորդ Սրբապան Հօր, քաջառողջութիւն մաղթեց իրենց, որպէսպի ուղիղ վարդապետութեամբ առաջնորդէր մեր հաւատացեալները:

Ընթրիքի ընթացքին Պրն. Կանիմեան եւս Թեմական Խորհուրդի անունով իր սրտաբուխ շնորհաւորութիւնները յայտնեց Սրբապան Հօր եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց իր աստուածահաճոյ հոգեւոր առաքելութեան: 82րդ Պարգամաւորական Ժողովի Արեւնապետ՝ Օրիորդ Էտրիըն Գրիգորեան շնորհաւորեց Սրբապան Հայրը եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ պարգամաւորները ուշադրութեամբ կը հետեւէին օրակարգի նիւթերուն եւ խմբովին իրենց մասնակցութիւնը կը բերէին առաջարկուած որոշումներուն: Մաղթեց, որ ապագային կարող Տիկիններ եւս Արեւնապետ ընտրուէին Պարգամաւորական Ժողովին:

Ներկայացուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր մը:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան, որ հակիրճ կերպով անդրադարձաւ Սրբապան Հօր գլխաւորութեամբ անցնող վեց տարիներու ընթացքին արձանագրուած յաջողութիւններուն, քաջառողջութիւն եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց իրեն:

Սրբապան Հայրը հոգեւոր եւ ոգեւորիչ պարգամ մը տուաւ եւ իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն վստահուած պաշտօնավարութեան նոր շրջանին համար: Թեմիս անունով իր սէրն ու անվերապահ հաւատարմութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Աստուծոյ կամքով յառաջիկայ տարուան Սեպտեմբեր ամսուան մէջ Օծումը պիտի կատարէ Առաջնորդանիստ Մայր Տաճարին:

Սրբապան Հայրը իր գնահատութիւնը յայտնեց Թեմական Խորհուրդին, ինչպէս նաեւ իրենց ծառայութեան շրջանը աւարտող Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեանին, Դոկտ. Վահրամ Պիրիճիքին եւ Բրշ. Գարըլ Սրկ. Պարտագեանին:

Ուրախ ենք յայտնելու, թէ անցնող մի քանի տարիներէ ի վեր Թեմէն ներս նոր աւանդութիւն մը ծնունդ առած է, որն է Պարգամաւորական Տարեկան Ժողովի Ճաշկերոյթի ընթացքին, Սրբապան Հայրը «Արքեպիսկոպոսի Մրցանակ»ին (Archbishop's Award) կ'արժանացնէ Թեմէն ներս 25 եւ կամ աւելի երկար տարիներ նուիրեալ ծառայութիւն ունեցող հաւատացեալները: Այս տարի այդ մրցանակին արժանացան Լոս Աճելլոսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցիէն Տիար Ռապրոթ Պարսամ, Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցիէն Տիար Քրիս Եալտրվեան եւ Անապատի Հայց. Եկեղեցիէն (Ռէնչօ Միրաժ) Տիկին Վիլօ Հերպէթեան: Իսկ Սրբապան Հայրը «Հայ Ոգի» (Hye Spirit) Շքանշանով եւ վկայագրով պատուեց Լոս Աճելլոսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցիէն Տէր եւ Տիկին Արմանտ Ագարակեանը եւ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցիէն Տէր եւ Տիկին Հէրի Շէրինեանը: Սրբապան Հայրը յարմար նկատեց նաեւ անգամ մը եւս պաշտօնապէս եւ բոլոր հիւրերու ներկայութեան պատուել եւ գնահատանքի արժանացնել Պարգամաւորական Ժողովի Պարտաստութեան Հիւրընկալ Յանձնախումբը՝ Լիլի Պալեան՝ Արեւնապետ, Բրշ. Տոքթ. Սարգիս Մետրոպեան, Սիլվա Սալմասթեան, Ռապրոթ Պարսամ, Լուսիելը Պողոսեան, Պէն Ամմիեան, Լեւոն Քրմբըմեան, Վիգէն Գուլյումճեան, Գէորգ Խարըշեան, Արփի Պարսամ, Հրանդ Արուրեան եւ Ճորճ Մարտիկեան:

Առ ի գնահատութիւն, Պարգամաւորական Ժողովի Արեւնապետ՝ Իրաւաբանուհի Էտրիըն Գրիգորեանին, Փոխ Արեւնապետ՝ Էտ Նիգսարեանին եւ Արեւնադպրուհի Զարուհի Տէր Մկրտիչեանին եւս Սրբապան Հայրը մեկական նուէր բաժնեց:

Սրբապան Հօր աղօթքով փակուեցաւ յայտագրի պաշտօնական բաժինը: